



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ԽԱՉԱՏՈՒԲՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգատ թիվ 22662/10)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

19 մարտի 2020թ.

*Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական
փոփոխությունների:*

Խաչատուրյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),
հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Քրիշտոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek]՝ *Նախագահ,*

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Պերե Պաստոր Վիլանովա [Pere Pastor Vilanova]՝ *դատավորներ,*

և Ռենատա Դեգեներ [Renata Degener]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,*

2020 թվականի փետրվարի 25-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՅԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Ռուսաստանի քաղաքացի տկն Կարինե Խաչատուրյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2010 թվականի փետրվարի 19-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 22662/10) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է Երեւանում տվյալ ժամանակահատվածում գործող իրավաբան պրն Վ. Գրիգորյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը, իսկ այնուհետեւ՝ Ե. Կիրակոսյանը:

3. 2014 թվականի մայիսի 19-ին Կառավարությունը ծանուցվել է դիմումատուի գույքի օտարման վերաբերյալ բողոքների մասին, իսկ գանգատը

մնացած մասով հայտարարվել է անընդունելի՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 54-րդ կանոնի 3-րդ կետի:

4. Ռուսաստանի կառավարությունը չի իրացրել վարույթին որպես երրորդ կողմ ներգրավվելու իր իրավունքը (Կոնվենցիայի 36-րդ հոդվածի 1-ին կետ):

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1958 թվականին եւ ապրում է Մոսկվայում:

6. 1995 թվականից ի վեր դիմումատուին սեփականության իրավունքով պատկանել է Երեւանի կենտրոնում՝ Բյուզանդ փողոցի 85 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի երկրորդ հարկում գտնվող 42,7 քառ. մետր ընդհանուր մակերեսով բնակարան (այսուհետ՝ առաջին բնակարան): Նրան իր դուստրերի հետ համատեղ սեփականության իրավունքով պատկանել է նաեւ նույն շենքի առաջին հարկում գտնվող՝ 46,3 քառ. մետր ընդհանուր մակերեսով բնակարան (այսուհետ՝ երկրորդ բնակարան):

7. 2007 թվականի հունվարի 25-ին Կառավարությունն ընդունել է թիվ 108-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ հաստատելով պետության կարիքների համար վերցվող՝ Երեւան քաղաքի վարչական սահմաններում գտնվող տարածքների օտարման գոտիները եւ հաստատելով այդ տարածքներում առկա սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրության կազմման կարգը եւ նկարագրության արձանագրության օրինակելի ձեւը: Բյուզանդի 85 հասցեում գտնվող շենքը չի ներառվել Որոշմանը կից ներկայացված՝ պետության կարիքների համար վերցվող սեփականության օբյեկտների հասցեների ցանկում:

8. Պետության կարիքների համար վերցվող, *inter alia* (*ի թիվս այլնի*), Բյուզանդ փողոցում գտնվող սեփականության օբյեկտները ձեռք բերելու

նպատակով Երեւանի քաղաքապետի կողմից լիազորված անհատ ձեռնարկատեր Հ.Բ.-ն 2007 թվականի հոկտեմբերի 5-ին երկու հայցադիմում է ներկայացրել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան (Վարչական շրջանի դատարան): Մասնավորապես հայցադիմումներից մեկը ներկայացվել է ընդդեմ դիմումատուի՝ ցանկանալով զրկել նրան առաջին բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքից, իսկ մյուս հայցադիմումը՝ ընդդեմ դիմումատուի եւ նրա դուստրերի՝ ցանկանալով զրկել նրանց երկրորդ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքից: Իր հայցադիմումներում Հ.Բ.-ն հիմնվել է, *inter alia*, Որոշման վրա՝ պնդելով, որ ինքն իրավունք ունի ձեռք բերելու տվյալ գույքը:

9. 2007 թվականի դեկտեմբերի 29-ին Վարչական շրջանի դատարանը բավարարել է վերոնշյալ երկու հայցադիմումները: Առաջին բնակարանի վերաբերյալ վճռում Վարչական շրջանի դատարանը գտել է, որ Որոշման մեջ այն ներառված էր որպես պետության կարիքների համար վերցվող սեփականության օբյեկտ, եւ որ այն պետք է դառնար Հ.Բ.-ի սեփականությունը՝ 9 556 500 ՀՀ դրամ փոխհատուցման դիմաց (մոտավորապես 17 400 եվրո):

Ինչ վերաբերում է երկրորդ բնակարանի մասով վճռին, ապա Վարչական շրջանի դատարանը դրանում նշել է, որ երկրորդ բնակարանը ներառված էր Որոշման մեջ որպես պետության կարիքների համար վերցվող սեփականության օբյեկտ եւ պետք է օտարվեր Հ.Բ.-ին: Այդ վճիռն ուժի մեջ է մտել եւ դարձել վերջնական:

10. 2008 թվականի ապրիլի 11-ին Հ.Բ.-ն մեկ այլ հայցադիմում է ներկայացրել ընդդեմ դիմումատուի եւ նրա դուստրերի՝ ցանկանալով դադարեցնել նրանց սեփականության իրավունքը, երկրորդ բնակարանի մասով ճանաչել իր իրավունքը եւ նրանց վտարել:

11. 2008 թվականի մայիսի 26-ին Վարչական շրջանի դատարանը բավարարել է Հ.Բ.-ի 2008 թվականի ապրիլի 11-ի հայցադիմումը: Վարչական շրջանի դատարանի վճռի համապատասխան մասերը շարադրվել են հետեւյալ

բովանդակությամբ.

«...[Վարչական շրջանի դատարանը], քննության առնելով քաղաքացիական գործն ըստ հայցի [Հ.Բ.-ի] ... ընդդեմ [ղիմումատուի], [ղիմումատուի դուստրերի]՝ նրանց սեփականության իրավունքը դադարեցնելու, սեփականության իրավունքները ճանաչելու եւ վտարելու պահանջի մասին ...

[Վարչական շրջանի դատարանը] ապացուցված է համարում, որ 2007 թվականի դեկտեմբերի 29-ի ... վճիռներով [Վարչական շրջանի դատարանը] բավարարել է [Հ.Բ.-ի] հայցաղիմումներն ընդդեմ [ղիմումատուի] ու [ղիմումատուի դուստրերի] ... եւ [ղիմումատուին] ու [նրա դուստրերին] պարտավորեցրել է [Հ.Բ.-ին] օտարել Բյուզանդ փողոցի 85 հասցեում գտնվող՝ 46,3 քառ. մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը, որը պատկանում էր նրանց:

Այդ վճիռն ուժի մեջ է մտել:

Դատավճռից հետո տեւական ժամանակ է անցել, սակայն պատասխանողները գույքը [Հ.Բ.-ին] չեն հանձնել:

... դատարանը որոշում է

բավարարել պահանջը.

Դադարեցնել Բյուզանդ փողոցի 85 հասցեի մասով [ղիմումատուի], [ղիմումատուի դուստրերի] սեփականության իրավունքները.

Ճանաչել Բյուզանդ փողոցի 85 հասցեի մասով [Հ.Բ.-ի] սեփականությունը.

Վտարել [ղիմումատուին], [ղիմումատուի դուստրերին] Բյուզանդ փողոցի 85 հասցեից.

...»:

12. 2008 թվականի հունիսի 20-ին ղիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել առաջին բնակարանի վերաբերյալ 2007 թվականի դեկտեմբերի 29-ի վճռի դեմ: Իր բողոքում նա մասնավորապես նշել է, որ Վարչական շրջանի դատարանը պատշաճ կերպով չի ծանուցել իրեն վարույթների վերաբերյալ, եւ որ վճռում նշված Որոշումն իր գույքին չէր վերաբերում:

13. 2008 թվականի հուլիսի 29-ին Երեւանի քաղաքապետը թույլտվություն է տվել Հ.Բ.-ին՝ քանդելու առաջին բնակարանը, եւ կարճ ժամանակ անց դա արվել է:

14. 2008 թվականի նոյեմբերի 6-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը

բեկանել է առաջին բնակարանի մասով 2007 թվականի դեկտեմբերի 29-ի վճիռը եւ գործը նոր քննության ուղարկել այն հիմքով, որ դիմումատուն վարույթի վերաբերյալ պատշաճ կերպով չի ծանուցվել: Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքում բերված փաստարկներին ըստ էության չի անդրադարձել:

15. 2009 թվականի ապրիլի 22-ին Վարչական շրջանի դատարանը մերժել է Հ.Բ.-ի 2007 թվականի հոկտեմբերի 5-ի հայցն այն հիմքով, որ առաջին բնակարանը Որոշման մեջ որպես պետության կարիքների համար վերցվող սեփականության օբյեկտ ներկայացված չէր: Միեւնույն ժամանակ Վարչական շրջանի դատարանը վճռել է, որ Հ.Բ.-ի կողմից իր դեպոզիտային հաշվին փոխանցված 9 556 500 ՀՀ դրամ փոխհատուցումը պետք է վերադարձվի նրան:

16. Հ.Բ.-ն վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ նշելով, *inter alia*, որ պետության կարիքների համար վերցվող գույքի ճշգրիտ հասցեի վերաբերյալ նշման բացակայությունը չի կարող ինքնին այն օտարելու համար խոչընդոտ հանդիսանալ: Նա այնուհետեւ պնդել է, որ, ըստ տվյալ սեփականության օբյեկտի նկարագրության սխեմայի, որը կազմվել է Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, Բյուզանդ փողոցի 85 հասցեում գտնվող շենքը եղել է այն սեփականության օբյեկտը շրջապատող տարածքում, որն ինքը Որոշման համաձայն իրավունք ուներ ձեռք բերելու:

17. Ի պատասխան Հ.Բ.-ի ներկայացրած փաստարկներին՝ դիմումատուն պնդել է, որ առաջին բնակարանի հասցեն հստակորեն նշված չէր Որոշման N 1 հավելվածում, որը պարունակում էր պետության կարիքների համար վերցվող տարբեր սեփականության օբյեկտների հասցեների սպառիչ ցանկը: Նա նաեւ պնդել է, որ Որոշումը չէր կարող լրացվել հայցվորի կողմից նշված սխեմայով, քանի որ այն դրա անբաժանելի մասը չէր կազմում, պաշտոնապես չէր հրապարակվել եւ ցանկացած դեպքում այն չէր կարող ընդգրկել մի հասցե, որը Որոշման N 1 հավելվածում ներառված չէր:

18. Վերաքննիչ դատարանում վարույթի ընթացքում Հ.Բ.-ն փորձել է հաշտության համաձայնություն կնքել դիմումատուի հետ՝ նրան առաջարկելով բնակարան նոր կառուցվելիք շենքում, սակայն դիմումատուն մեժել է նրա

առաջարկը:

19. 2009 թվականի հոկտեմբերի 15-ին Հ.Բ.-ն գրավոր դիմում է ներկայացրել Վերաքննիչ դատարան այն մասին, որ դիմումատուն չի ցանկացել հաշտության համաձայնություն կնքել, եւ պահանջել է, որ դատարանը բեկանի 2009 թվականի ապրիլի 22-ի վճիռը եւ բավարարի 2007 թվականի հոկտեմբերի 5-ի իր հայցը: Նա նաև նշել է, որ առաջին բնակարանի նկատմամբ դիմումատուի սեփականության իրավունքն արդեն իսկ դադարեցվել էր Վարչական շրջանի դատարանի 2008 թվականի մայիսի 26-ի վճռով և, հետևաբար, դիմումատուի այն պնդումը, որ այն նշված չէր Որոշման մեջ որպես պետության կարիքների համար վերցվող գույք, անհիմն էր:

20. 2009 թվականի հոկտեմբերի 20-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանն անփոփոխ է թողել 2009 թվականի ապրիլի 22-ի վճիռը: Այդ կերպ վարվելով, այնուամենայնիվ, Վերաքննիչ դատարանը, *inter alia*, հղում է կատարել երկրորդ բնակարանի մասով Վարչական շրջանի դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 29-ի եւ 2008 թվականի մայիսի 26-ի վճիռներին: Վերաքննիչ դատարանը եկել է այն եզրահանգման, որ այդ վերջնական եւ պարտադիր ուժ ունեցող վճիռները պետք է համարվեն *res judicata* (կրկին վերանայման ոչ ենթակա) առաջին բնակարանի վերաբերյալ վեճի մասով, եւ ուստի այն չի անդրադառնա վերաքննիչ բողոքում բերված փաստարկներին:

21. 2009 թվականի նոյեմբերի 16-ին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել Վարչական շրջանի դատարանի 2008 թվականի մայիսի 26-ի վճռի դեմ՝ բողոքարկելով մասնավորապես այն փաստը, որ դիմումատուն պատշաճ կերպով չի ծանուցվել նիստի անցկացման օրվա եւ ժամանակի վերաբերյալ: Դիմումատուն նաև պահանջել է, որ վերաքննիչ բողոք ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնվի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճռի գոյության մասին ինքն իմացել է միայն 2009 թվականի հոկտեմբերի 16-ին Վերաքննիչ դատարանում տեղի ունեցած նիստի ժամանակ:

22. 2009 թվականի նոյեմբերի 20-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է

ներկայացրել 2009 թվականի հոկտեմբերի 20-ի որոշման դեմ՝ կրկին նշելով, որ ինքն առաջին բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքից զրկվել է օրենքի խախտմամբ: Նա նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից նշված՝ Վարչական շրջանի դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 29-ի եւ 2008 թվականի մայիսի 26-ի վճիռները վերաբերել են նույն շենքում գտնվող մեկ այլ՝ երկրորդ բնակարանին, որի ընդհանուր մակերեսը 46,3 քառ. մետր էր, եւ որ այդ վճիռները որեւէ կապ չունեին առաջին բնակարանի մասով վճիռների հետ, որի միակ սեփականատերը, սեփականության վկայականի համաձայն, ինքն էր, եւ որը վարույթով վեճի առարկան էր:

23. 2009 թվականի նոյեմբերի 23-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը վերաքննիչ բողոքը հայտարարել է անընդունելի եւ մերժել է վերականգնել բաց թողնված ժամկետը: Այն այդ առնչությամբ նշել է, որ գործի նյութերում որեւէ տեղեկություն չկա դիմումատուի գրանցման կամ բնակության վայրի վերաբերյալ, եւ որ Վարչական շրջանի դատարանը բազմիցս ծանուցել է պատասխանող կողմին, այդ թվում՝ դիմումատուին, գործի նյութերում նշված հասցեով, այն է՝ Բյուզանդ փողոցի 85 շենքը, սակայն փոստային առաքանիները վերադարձվել են: Այդ որոշումը ենթակա էր Վճռաբեկ դատարանում բողոքարկման երկշաբաթյա ժամկետում: Դիմումատուն վճռաբեկ բողոք չի ներկայացրել:

24. 2009 թվականի դեկտեմբերի 28-ին Վճռաբեկ դատարանն անընդունելի է համարել 2009 թվականի նոյեմբերի 20-ի վճռաբեկ բողոքը՝ հիմքերի բացակայության պատճառով: Այդպիսով, Վճռաբեկ դատարանը վերահաստատել է Վերաքննիչ դատարանի կողմից իր 2009 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ տրված պատճառաբանությունն այն մասին, որ միեւնույն կողմերի միջեւ միեւնույն վեճի առնչությամբ կա վերջնական եւ պարտադիր ուժ ունեցող վճիռ: Վճռաբեկ դատարանը չի անդրադարձել դիմումատուի կողմից իր վճռաբեկ բողոքում ներկայացված վերոնշյալ փաստարկներին:

Ա. 1995 թվականի Սահմանադրություն (2005 թվականի դեկտեմբերի 6-ին ուժի մեջ մտած՝ 2005 թվականի նոյեմբերի 27-ին կատարված փոփոխություններով)

25. 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ կտակելու իր սեփականությունը: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի: Սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

Բ. «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենք (ուժի մեջ է 2006 թվականի դեկտեմբերի 30-ից)

26. 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական հիմքը բացառիկ՝ գերակա հանրային շահն է:

27. 3-րդ հոդվածի 2-րդ մասին համաձայն՝ հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական պայմաններն են՝

ա) օտարումը պետք է իրականացվի օրենքով սահմանված կարգով.

բ) օտարվող սեփականության դիմաց պետք է տրվի նախնական համարժեք փոխհատուցում:

7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հասարակության եւ պետության կարիքների համար սեփականությունն օտարվում է միայն կառավարության կողմից օտարման նպատակը բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու դեպքում:

28. 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», «բ» եւ «գ» կետերի համաձայն՝ գերակա

հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման մեջ նշվում են այն բացառիկ՝ գերակա հանրային շահը, որի համար պետք է օտարվի սեփականությունը, օտարվող սեփականության ձեռքբերողը, օտարման ենթակա սեփականության իրավունքի օբյեկտները (հասցեները կամ գտնվելու վայրը կամ այլ տվյալներ, որոնցով տվյալ սեփականությունը տարբերվում է այլ սեփականությունից):

29. 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը:

Գ. Կառավարության 2007 թվականի հունվարի 25-ի ԸԵՐԵԱՆ քաղաքի վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու, գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում առկա սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրության կազմման կարգը եվ նկարագրության արձանագրության օրինակելի ձևը հաստատելու մասին՝ թիվ 108-Ն որոշում

30. Որոշմամբ ճանաչվում է, որ դրա N 1 հավելվածում նշված տարածքներում իրականացվող քաղաքաշինական ծրագրերի առնչությամբ առկա է բացառիկ՝ գերակա հանրային շահ:

Որոշման N 1 հավելվածում սահմանվում է պետության կարիքների համար վերցվող՝ Երեւան քաղաքի վարչական սահմաններում գտնվող սեփականության օբյեկտների եւ հասցեների ցանկը:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

31. Դիմումատուն բողոքել է, որ իրեն սեփականությունից զրկելը եղել է ապօրինի եւ որեւէ հանրային շահ չի հետապնդել: Ավելին, նրան իր սեփականությունից զրկել են առանց փոխհատուցման: Նա հիմնվել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի վրա, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի

օրենքներ կիրառելու իրավունքը, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Ա. Ընդունելիությունը

32. Կառավարությունը նշել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական հասանելի միջոցները: Այն պնդել է մասնավորապես, որ դիմումատուն առաջին բնակարանից զրկվել է Վարչական շրջանի դատարանի 2008 թվականի մայիսի 26-ի վճռի ուժով, որով դադարեցվել են Բյուզանդ փողոցի 85 հասցեում գտնվող ամբողջ գույքի նկատմամբ դիմումատուի եւ նրա դուստրերի սեփականության իրավունքները: 2009 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանն այդ վճռի մասով դիմումատուի՝ սահմանված ժամկետից ուշ ներկայացված վերաքննիչ բողոքը հայտարարել է անընդունելի՝ մերժելով բողոք ներկայացնելու ժամկետը վերականգնելու պահանջը: Սույն որոշումը ենթակա է եղել բողոքարկման Վճռաբեկ դատարանում, սակայն դիմումատուն վճռաբեկ բողոք չի ներկայացրել:

33. Դիմումատուն պնդել է, որ ինքը չէր կարող փոխհատուցում պահանջել իր քանդված բնակարանի համար՝ նախքան սեփականությունից զրկելու օրինականության վերաբերյալ իր եւ Հ.Բ.-ի միջեւ վեճի լուծումը, մինչդեռ այդ մասով վարույթը դեռ ընթացքի մեջ է եղել, երբ առաջին բնակարանը քանդել են: Դիմումատուն նշել է, որ Կառավարությունը չի ներկայացրել իրավական պաշտպանության որեւէ արդյունավետ միջոց, որով նա կարող էր փոխհատուցում պահանջել ապօրինի քանդված իր բնակարանի համար: Ինչ վերաբերում է Կառավարության այն փաստարկին, որ ինքը Վերաքննիչ դատարանի 2009 թվականի նոյեմբերի 23-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք չի ներկայացրել, ապա այդ վճիռը վերաբերում էր երկրորդ բնակարանին:

34. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին

կետում նշված՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու կանոնով պահանջվում է, որ այն անձինք, որոնք ցանկանում են պետության դեմ գործ հարուցել որեւէ միջազգային դատական ատյանում, առաջին հերթին օգտվեն ներպետական իրավական համակարգով նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից՝ դրանով իսկ պետությանը զերծ պահելով միջազգային ատյանի առջև պատասխան տալուց այնպիսի գործողությունների համար, որոնք նա հնարավորություն չի ունեցել կարգավորելու իր սեփական իրավական համակարգի միջոցով: Այս կանոնը պահպանելու համար դիմումատուն պետք է օգտվի իրավական պաշտպանության՝ սովորաբար կիրառվող միջոցներից, որոնք հասանելի են եւ բավարար ենթադրյալ խախտումների մասով փոխհատուցում ապահովելու համար (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Վուչկովիչը եւ այլք ընդդեմ Սերբիայի* (նախնական առարկություն) [ՄՊ] [*Vučković and Others v. Serbia* (preliminary objection) [GC]], թիվ 17153/11 եւ եւս 29-ը, §§ 70 եւ 71, 2014 թվականի մարտի 25):

35. Պետք է սպառվեն իրավական պաշտպանության միայն այն միջոցները, որոնք արդյունավետ են: Չսպառելու մասին պնդող Կառավարությունը պետք է Դատարանում ապացուցի, որ իրավական պաշտպանության այդ միջոցը եղել է արդյունավետ, տվյալ ժամանակահատվածում տեսականորեն ու գործնականում հասանելի, այսինքն՝ այն մատչելի է եղել, դրա միջոցով հնարավոր է եղել դիմումատուի բողոքների մասով փոխհատուցում տրամադրել, ինչպես նաեւ դրանով ընձեռվել է հաջողության հասնելու ողջամիտ հեռանկար: Այն դեպքում, երբ այդ ապացուցման պարտականությունը կատարված է, դիմումատուն պետք է ապացուցի, որ Կառավարության կողմից առաջարկվող իրավական պաշտպանության միջոցը, ըստ էության, սպառված է եղել կամ որոշ պատճառներով գործի կոնկրետ հանգամանքներում եղել է ոչ պատշաճ եւ անարդյունավետ, կամ որ առկա են եղել հատուկ հանգամանքներ, որոնք նրան ազատել են այդ պահանջի կատարումից (տե՛ս *Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [*Kalashnikov v. Russia* (dec.)], թիվ 47095/99, ՄԻԵԴ 2001-XI (քաղվածքներ):

36. Դատարանը նշում է, որ Կառավարությունը չի մատնանշել իրավական պաշտպանության որեւէ ներպետական միջոց, որով դիմումատուն հնարավորության դեպքում կարող էր փոխհատուցում պահանջել իր օտարված եւ քանդված բնակարանի համար այն հանգամանքներում, երբ դատարանները հստակորեն չեն եզրակացրել, որ օտարումը եղել է ապօրինի: Ուստի անտրամաբանական չէ, որ դիմումատուն փորձել է դատական եզրակացություն ստանալ մինչ այդ արդեն իսկ քանդված՝ առաջին բնակարանի օտարման անօրինականության վերաբերյալ, որպեսզի ստանա դրա արժեքի դիմաց հայցի ուժով օժտված փոխհատուցում պահանջելու իրավունք. տարբերակ, որը տվյալ հանգամանքներում ողջամիտ եւ հիմնավորված էր:

37. Ինչ վերաբերում է Կառավարության առաջ քաշած այն փաստարկին, որ դիմումատուն իրականում առաջին բնակարանից զրկվել է 2008 թվականի մայիսի 26-ի վճռի ուժով, իսկ Վերաքննիչ դատարանի 2009 թվականի նոյեմբերի 23-ի որոշման դեմ նա վճռաբեկ բողոք չի ներկայացրել (տե՛ս վերելում՝ 23-րդ պարբերությունը), Դատարանը նշում է, որ տվյալ վճիռը, չնայած եզրափակիչ մասում Բյուզանդ փողոցի 85 հասցեի վերաբերյալ ընդհանուր հղմանը, իրականում վերաբերում է երկրորդ բնակարանին: Մասնավորապես այդ վճիռը ոչ միայն հիմնված էր երկրորդ բնակարանի վերաբերյալ Հ.Բ.-ի հայցի վրա, այլ նաեւ վճռի պատճառաբանական մասում ինքնին հղում էր կատարվում 46,3 քառ. մետր ընդհանուր մակերեսով բնակարանին, որը երկրորդ բնակարանն է (տե՛ս վերելում՝ 10-րդ եւ 11-րդ պարբերությունները): Ամեն դեպքում, ինչպես նշվել է վերելում, դիմումատուն պատշաճ կերպով բարձրացրել է Կոնվենցիայով իր բողոքն այն մասին, որ առաջին բնակարանի օտարման վերաբերյալ վարույթի շրջանակներում առաջին բնակարանից իրեն զրկելը չի իրականացվել օրենքին համապատասխան: Ուստի Դատարանն ապացուցված է համարում, որ դիմումատուն Կոնվենցիայով իր բողոքները ներկայացրել է համապատասխան ընթացակարգի շրջանակներում՝ նախքան դրանք Ստրասբուրգում բարձրացնելը: Հետեւաբար Դատարանը մերժում է իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ Կառավարության առարկությունը:

38. Դատարանը նշում է, որ այս բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

39. Դիմումատուն պնդել է, որ առաջին բնակարանն այդ Որոշման ուժով պետության կարիքների համար օտարման ենթակա չէր, քանի որ դրա հասցեն այնտեղ նշված չէր: «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 2-րդ մասով պահանջվում է, որ այդ սեփականությունն օտարելիս բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության համապատասխան որոշման մեջ նշվեն օտարման ենթակա սեփականության իրավունքի օբյեկտները: Այնուամենայնիվ, Որոշման մեջ նրա սեփականության վերաբերյալ որևէ նշում առկա չէր, որը, այնուհանդերձ, օտարվել էր այդ Որոշման հիման վրա: Դիմումատուն այնուհետև պնդել է, որ ինքը որևէ փոխհատուցում չի ստացել առաջին բնակարանի համար:

40. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուի սեփականության օտարումն իրականացվել է օրենքին համապատասխան: Մասնավորապես այն հիմնված է եղել Օրենքի եւ Օրենքի պահանջներին համապատասխանող Որոշման համապատասխան դրույթների վրա: Բյուզանդ փողոցի 85 հասցեում գտնվող շենքը ներառված է եղել Հ.Բ.-ի եւ Երեւանի քաղաքապետի միջեւ կնքված պայմանագրին կից ներկայացված նախագծում, ինչպես նաեւ Որոշման N 1 հավելվածում սահմանված՝ սեփականության նկարագրության սխեմայում: Կառավարությունն այնուհետև պնդել է, որ վիճարկվող օտարումը կատարվել է «ի շահ հանրության»,

եւ դիմումատուի իրավունքների ու համայնքային շահերի միջեւ հաստատվել է արդարացի հավասարակշռություն:

2. Դատարանի գնահատականը

41. Սույն գործում վիճելի չէ այն փաստը, որ տեղի է ունեցել «գույքից զրկում»՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ նախադասության իմաստով: Դատարանը հետեւաբար պետք է պարզի, թե արդյոք վիճարկվող գույքից զրկումն այդ դրույթի համաձայն հիմնավորված է եղել:

42. Դատարանը կրկին նշում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ համատեղելի լինելու համար օտարմանն ուղղված միջոցառումը պետք է բավարարի հետեւյալ երեք պայմանները. այն պետք է իրականացվի ազգային իշխանությունների կողմից ցանկացած կամայական գործողություն բացառող՝ «օրենքով նախատեսված պայմաններին համապատասխան», պետք է բխի «հանրային շահերից», ինչպես նաեւ դրանով պետք է հաստատվի արդարացի հավասարակշռություն սեփականատիրոջ իրավունքների եւ համայնքային շահերի միջեւ (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Վիստինշը եւ Պերեպոլկինսն ընդդեմ Լատվիայի* [ՄՊ] [*Vistiņš and Perepjolkins v. Latvia* [GC]], թիվ 71243/01, § 94, 2012 թվականի հոկտեմբերի 25):

43. Դատարանն այնուհետեւ վերահաստատում է, որ «օրենքով նախատեսված պայմաններով» արտահայտությունն առաջին հերթին պահանջում է պատշաճ մակարդակի մատչելի եւ բավարար հստակ ներպետական իրավական նորմերի առկայություն եւ համապատասխանություն դրանց (տե՛ս, *Լիթգոուն եւ այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Lithgow and Others v. the United Kingdom*] վճիռը, 1986 թվականի հուլիսի 8, § 110, շարք Ա, թիվ 102):

44. Դատարանը նկատում է, որ դիմումատուն Երեւան քաղաքի կենտրոնում՝ Բյուզանդ փողոցի 85 հասցեում գտնվող շենքի մաս հանդիսացող՝ 42,7 քառ. մետր ընդհանուր մակերեսով բնակարանի՝ առաջին բնակարանի սեփականատերն է

եղել: Վիճելի չէ, որ առաջին բնակարանի օտարումն իրականացվել է Օրենքի հիման վրա: Դատարանն այնուհետև նկատում է, որ դիմումատուն չի պնդել, որ Օրենքի համապատասխան դրույթներն իր համար մատչելի կամ կանխատեսելի չեն եղել, սակայն բողոքել է, որ ինքն առաջին բնակարանից զրկվել է այդ դրույթների խախտմամբ:

45. Դատարանը նշում է, որ Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով պահանջվում է, որ որոշակի սեփականության մասով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման մեջ պետք է պատշաճ կերպով նշվեն հասցեները կամ գտնվելու վայրը կամ այլ տեղեկություններ, որոնցով նույնականացվում են օտարման ենթակա սեփականության օբյեկտները (տե՛ս վերևում՝ 28-րդ պարբերությունը): Դատարանն այնուհետև նշում է, որ 2007 թվականի հունվարի 25-ին Կառավարությունը Որոշումն ընդունել է՝ որոշելով պետության կարիքների համար օտարել դրա N 1 հավելվածում թվարկված անշարժ գույքը՝ Երևան քաղաքի կենտրոնում շինարարական ծրագրեր իրականացնելու նպատակով (տե՛ս վերևում՝ 30-րդ պարբերությունը): Դատարանը նաև նշում է, որ Բյուզանդ փողոցի 85 հասցեում գտնվող շենքը ներառված չի եղել Որոշման N 1 հավելվածում: Չնայած այդ հանգամանքին, այնուամենայնիվ, Բյուզանդ փողոցի 85 հասցեում գտնվող առաջին բնակարանը Որոշման հիման վրա օտարվել է պետության կարիքների համար:

46. Կառավարությունը պնդել է, որ առաջին բնակարանի օտարումը, այնուամենայնիվ, եղել է օրինական, քանի որ Բյուզանդ փողոցի 85 հասցեն ներառվել է Հ.Բ.-ի եւ Երևանի քաղաքապետի միջև կնքված պայմանագրին կից ներկայացված նախագծերում, ինչպես նաև Որոշման N 1 հավելվածում սահմանված սեփականության օբյեկտների նկարագրության սխեմայում: Դատարանն անհրաժեշտ չի համարում անդրադառնալ այդ փաստարկներին, քանի որ Վարչական շրջանի դատարանը 2009 թվականի ապրիլի 22-ի իր վճռում եկել է այն եզրահանգման, որ առաջին բնակարանն օտարման ենթակա չի եղել Որոշման համաձայն, քանի որ Բյուզանդ փողոցի 85 հասցեում գտնվող տունը Որոշման N 1

հավելվածում սահմանված՝ պետության կարիքների համար վերցվող սեփականության իրավունքի օբյեկտների սպառիչ ցանկում ներառված չի եղել (տե՛ս վերելում՝ 15-րդ պարբերությունը): Այդ վճիռն անփոփոխ է թողնվել Վերաքննիչ դատարանի, իսկ այնուհետև Վճռաբեկ դատարանի կողմից (տե՛ս վերելում՝ 20-րդ եւ 24-րդ պարբերությունները): Հաշվի առնելով այն փաստը, որ ներպետական դատարաններն ավելի լավ կարող են մեկնաբանել եւ կիրառել ներպետական իրավունքը, Դատարանը որեւէ պատճառ չի տեսնում առանձին ուսումնասիրելու այն հարցը, թե արդյոք Կառավարության կողմից նշված փաստաթղթերը ներպետական իրավունքով կարող են համարվել Որոշմանը լրացնող այն առումով, որ հիմք հանդիսանան առաջին բնակարանի օտարման համար:

47. Ինչպես նշվել է վերելում, 2009 թվականի ապրիլի 22-ի վճռով միանշանակ հաստատվել է, որ առաջին բնակարանը Որոշման ուժով օտարման ենթակա չէր: Հետաքրքրական է, որ թեեւ Վերաքննիչ դատարանը վճիռն անփոփոխ է թողել՝ դրանով ենթադրաբար հաստատելով դրանում արտահայտված եզրահանգումները, այն իր 2009 թվականի հոկտեմբերի 20-ի որոշման մեջ հղում է կատարել 2007 թվականի դեկտեմբերի 29-ի եւ 2008 թվականի մայիսի 26-ի վճիռներին, որոնք երկուսն էլ վերաբերում էին երկրորդ բնակարանի օտարմանը (տե՛ս վերելում՝ 9-րդ, 11-րդ եւ 37-րդ պարբերությունները)՝ սահմանելու համար, որ այդ վճիռները պետք է համարել *res judicata* առաջին բնակարանի վերաբերյալ վեճի մասով (տե՛ս վերելում՝ 20-րդ պարբերությունը): Արդյունքում, մի կողմից առաջին բնակարանի օտարման ապօրինի լինելը ճանաչող 2009 թվականի ապրիլի 22-ի վճիռը շարունակել է ուժի մեջ մնալ, իսկ մյուս կողմից՝ Վերաքննիչ դատարանն առանց որեւէ լրացուցիչ պատճառաբանություն ներկայացնելու նշել է, որ առաջին բնակարանի օտարման օրինականության վերաբերյալ հարցերն արդեն իսկ որոշվել են 2007 թվականի դեկտեմբերի 29-ի եւ 2008 թվականի մայիսի 26-ի վերջնական եւ պարտադիր ուժ ունեցող վճիռներով, որոնք, ինչպես արդեն վերելում նշվել է, վերաբերում են մեկ այլ սեփականության օտարմանը՝ մասնավորապես դիմումատուի եւ նրա դուստրերի սեփականությանը պատկանող՝ միեւնույն շենքում գտնվող երկրորդ բնակարանին: Դիմումատուն այդ հարցերն առավել

մանրամասնորեն ներկայացրել է իր վճռաբեկ բողոքում, սակայն նրան, ի վերջո, բողոքարկելու թույլտվություն չեն տվել (տե՛ս վերելում՝ 22-րդ և 24-րդ պարբերությունները):

48. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ դիմումատուին սեփականությունից զրկումը չի իրականացվել «օրենքով նախատեսված պայմաններին» համապատասխան: Հաշվի առնելով այդ եզրահանգումը՝ ավելորդ է քննել, թե արդյոք խնդրո առարկա միջամտությունը հետապնդել է իրավաչափ նպատակ և եղել է այդ նպատակին համաչափ (տե՛ս, օրինակ, *Վիատովիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Vijatović v. Croatia*], թիվ 50200/13, § 58, 2016 թվականի փետրվարի 16, և *Գուբիեւն ընդդեմ Ռուսաստանի* [*Gubiyev v. Russia*], թիվ 29309/03, § 83, 2011 թվականի հուլիսի 19):

49. Հետևաբար տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 41-ԸՆԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

50. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է անհրաժեշտության դեպքում տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

1. Նյութական վնասը

51. Դիմումատուն պահանջել է 71 595 եվրո՝ որպես նյութական վնասի փոխհատուցում: Այդ գումարը բաղկացած է առաջին բնակարանի՝ մինչև դրա քանդումը շուկայական արժեքից եւ Օրենքի 11-րդ հոդվածով սահմանված 15% ավելացումից (տե՛ս վերելում՝ 29-րդ պարբերությունը), որոնք միասին կազմում են 49 817 եվրո, ինչպես նաեւ բազմաբնակարան շենքով ծանրաբեռնված հողակտորի նկատմամբ դիմումատուի մասնաբաժնի արժեքից եւ դրա 15% ավելացումից, որոնք միասին կազմում են 21 778 եվրո:

Առաջին բնակարանի արժեքի մասով իր պահանջը հիմնավորելու համար դիմումատուն ներակայացրել է 2014 թվականի նոյեմբերի 19-ին իրականացված փորձագիտական եզրակացություն, որով առաջին բնակարանի հավանական շուկայական արժեքը 2008 թվականի հուլիսի 15-ի դրությամբ գնահատվել է 19 085 000 ՀՀ դրամ (համապատասխան ժամանակահատվածում մոտավորապես 40 000 եվրո):

Ինչ վերաբերում է շենքով ծանրաբեռնված հողի նկատմամբ իր մասնաբաժնի վերաբերյալ պահանջներին, ապա դիմումատուն ներկայացրել է տեղեկանք անշարժ գույքի գնահատողից, որում նշվում է, որ տվյալ հասցեում գտնվող հողատարածքի մեկ քառ. մետրի հավանական շուկայական արժեքը համապատասխան ժամանակահատվածում կազմել է 420 000 ՀՀ դրամ:

52. Կառավարությունը վիճարկել է 2014 թվականի նոյեմբերի 19-ի փորձագիտական եզրակացության վավերությունը եւ այն համարել ոչ արժանահավատ: Այն պնդել է, որ ո՛չ անշարժ գույքի գնահատման ընկերությունը, ո՛չ համապատասխան փորձագետը 2008 թվականի հուլիսին չեն ունեցել լիցենզիա՝ անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնելու համար: Կառավարությունը խնդրել է Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ենթակայության տակ գործող մասնագիտական կոմիտեին ուսումնասիրել 2014 թվականի նոյեմբերի 19-ի գնահատման եզրակացությունը՝ պարզելու համար, թե արդյոք այն համապատասխանում էր ներպետական իրավունքի համապատասխան պահանջներին: Իր եզրահանգումներում կոմիտեն առանձնացրել է եզրակացության մեջ տեղ գտած մի շարք թերություններ, որոնք ցույց են տալիս, որ անշարժ գույքի գնահատման գործունեության ոլորտում կիրառելի համապատասխան չափանիշները չեն պահպանվել:

Ինչ վերաբերում է շենքով ծանրաբեռնված հողակտորի նկատմամբ իր մասնաբաժնի արժեքի մասով դիմումատուի պահանջներին, ապա Կառավարությունը նշել է, որ անշարժ գույքի գնահատողի համապատասխան տեղեկանքը չէր կարող ընդունվել որպես գնահատման համար վավեր հիմք, քանի որ այն պատշաճ փորձագիտական եզրակացություն չէր:

53. Դատարանը բազմիցս նշել է, որ վճիռը, որով այն խախտում է արձանագրում, պատասխանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում խախտումը վերացնելու եւ դրա հետեւանքների համար հատուցում տրամադրելու՝ այնպես, որ հնարավորինս վերականգնվի մինչեւ խախտումը գոյություն ունեցած իրավիճակը (տե՛ս Բատրիդիսն ընդդեմ Հունաստանի

(արդարացի փոխհատուցում) [ՄՊ] [Iatridis v. Greece (just satisfaction) [GC]], թիվ 31107/96, § 32, ՄԻԵԴ 2000-XI): Եթե խախտման բնույթը թույլ է տալիս *restitutio in integrum* (մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած իրավիճակի հնարավորինս վերականգնում), ապա պետության պարտականությունն է դա իրագործելու նպատակով պատասխանատվության ենթարկելը, քանի որ Դատարանը դա անելու ո՛չ լիազորություն ունի, ո՛չ էլ գործնական հնարավորություն: Եթե, այնուամենայնիվ, ազգային իրավունքով խախտման հետևանքների համար հատուցում չի թույլատրվում կամ թույլատրվում է մասնակիորեն, ապա 41-րդ հոդվածով Դատարանին շնորհվում է լիազորություն՝ տուժած կողմին տրամադրելու այնպիսի փոխհատուցում, որն այն նպատակահարմար է համարում (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի (արդարացի փոխհատուցում) [ՄՊ] [Brumărescu v. Romania (just satisfaction) [GC]], թիվ 28342/95, § 20, ՄԻԵԴ 2001-I):

54. Դատարանը նշում է, որ դիմումատուի բնակարանի առնչությամբ *restitutio in integrum* որեւէ կերպ հնարավոր չէ, քանի որ այն քանդվել էր: Հետևաբար Դատարանը գտնում է, որ պետք է շնորհվի նյութական վնասի փոխհատուցում:

55. Հաշվի առնելով այն փաստը, որ առաջին բնակարանը քանդվել էր մինչև դրա առնչությամբ դատական վարույթն ավարտվելը, Դատարանը գտնում է, որ փոխհատուցման չափը պետք է որոշվի այն ժամանակահատվածի դրությամբ, երբ փաստացի քանդումը տեղի է ունեցել, այն է՝ 2008 թվականի հուլիսի վերջը կամ օգոստոսի սկիզբը (տե՛ս վերելում՝ 13-րդ պարբերությունը):

56. Դատարանը դիտարկում է, որ առաջին բնակարանը կորցնելու արդյունքում կրած նյութական վնասի մասով իր պահաջները հիմնավորելու նպատակով դիմումատուն ներկայացրել է փորձագիտական եզրակացություն, որով գնահատվել է դրա շուկայական արժեքը տվյալ ժամանակահատվածի դրությամբ, այն է՝ 2008 թվականի հուլիսին (տե՛ս վերելում՝ 51-րդ պարբերությունը):

Չնայած Կառավարությունը վիճարկել է այդ եզրակացության վավերությունը եւ կասկածի տակ դրել դրա արժանահավատությունը, այն չի ներկայացրել իր

սեփական եզրակացությունը, որ Դատարանը համեմատության հիմք ունենար: Փոխարենը Կառավարությունը ներկայացրել է Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ենթակայության տակ գործող մասնագիտական կոմիտեի կողմից տրված Ոմասնագիտական կարծիքը, որում ներկայացվել են համապատասխան եզրակացության մի քանի թերություններ, մասնավորապես այն առումով, որ անշարժ գույքի գնահատման գործունեության ոլորտում կիրառելի համապատասխան չափանիշները չեն պահպանվել: Իր կարծիքում, այնուամենայնիվ, կոմիտեն չի նշել, որ տվյալ թերությունները հիմք են եզրակացության անվավերության համար, ինչպես նաև կասկածի տակ չի առել դրանում որոշված վերջնական արժեքը: Այդպիսի հանգամանքներում եւ հաշվի առնելով համապատասխան ժամանակահատվածի ընթացքում հայաստանյան գույքի շուկայում գնման գների վերաբերյալ իրեն հասանելի տեղեկությունները՝ Դատարանը որեւէ պատճառ չի տեսնում դիմումատուի կողմից ներկայացված փորձագիտական եզրակացության մեջ սահմանված շուկայական արժեքի ճշգրտությունը կասկածի տակ առնելու համար:

57. 2014 թվականի նոյեմբերի 19-ի փորձագիտական եզրակացության համաձայն՝ առաջին բնակարանի շուկայական արժեքը 2008 թվականի հուլիսի 15-ի դրությամբ կազմել է 19 085 000 ՀՀ դրամ (մոտավորապես 40 000 եվրո): Եթե առաջին բնակարանը օտարված լիներ համապատասխան ներպետական ընթացակարգի համաձայն, ապա դիմումատուն Օրենքի 11-րդ հոդվածի ուժով իրավունք կունենար ստանալու այդ գումարի նկատմամբ 15% ավելացում: Հետեւաբար Դատարանը կարծում է, որ 15% ավելացումը պետք է գումարվի առաջին բնակարանի արժեքին: Հաշվի առնելով իր նախադեպային իրավունքով սահմանված սկզբունքները՝ ստացված գումարը պետք է այնուհետեւ փոխարկվի ընթացիկ արժեքի՝ գնաճի հետեւանքները փոխհատուցելու նպատակով (տե՛ս *Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի* (արդարացի փոխհատուցում) [*Minasyan and Semerjyan v. Armenia* (just satisfaction)] թիվ 27651/05, § 20, 2011 թվականի հունիսի 7, եւ *Վարդանյանն ընդդեմ Հայաստանի* (արդարացի փոխհատուցում) [*Vardanyan v. Armenia* (just satisfaction)], 8001/07, § 37, 2019

թվականի հուլիսի 25):

58. Հաշվի առնելով վերոնշյալ գործոնները՝ Դատարանն առաջին բնակարանը կորցնելու արդյունքում դիմումատուի կրած նյութական վնասի չափը գնահատում է 68 000 եվրո:

59. Եվ վերջում, դիմումատուն պահանջ է ներկայացրել բազմաբնակարան շենքով ծանրաբեռնված հողակտորի նկատմամբ իր մասնաբաժնի առնչությամբ: Այնուամենայնիվ, որեւէ տեղեկություն չկա, որով նշվում է, որ, ըստ ներպետական իրավունքի, բազմաբնակարան շենքով ծանրաբեռնված հողակտորի նկատմամբ ընդհանուր սեփականության մեջ անձի մասնաբաժինը կարող է լինել ինքնուրույն գործարքի առարկա: Ուստի Դատարանը կարծում է, որ այդ մասով դիմումատուի պահանջը հիմնավորված չէ եւ չի առաջացնում փոխհատուցման ենթակա որեւէ առանձին վնաս:

2. Ոչ նյութական վնասը

60. Դիմումատուն պահանջել է 15 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

61. Կառավարությունը համարել է, որ այդ մասով դիմումատուի պահանջը չափազանցված է:

62. Դատարանը գտնում է, որ իր ունեցվածքի ապօրինի զրկումից առաջացած անգործության եւ հիասթափության զգացողությունները դիմումատուին պատճառել են ոչ նյութական վնաս, որը պետք է պատշաճորեն փոխհատուցվի: Որոշում կայացնելով արդարացիության սկզբունքի հիման վրա, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 41-րդ հոդվածով, Դատարանը որոշում է այս մասով դիմումատուին շնորհել 3 000 եվրո:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

63. Դիմումատուն ծախսերի եւ ծախքերի մասով որեւէ պահանջ չի ներկայացրել:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

64. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱԴԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Հայտարարում է գանգատն ընդունելի.
2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում.

3. Վճռում է, որ՝

ա) պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի հետեւյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

- i) նյութական վնասի դիմաց՝ 68 000 եվրո (վաթսուներեք հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,
 - ii) ոչ նյութական վնասի դիմաց՝ 3 000 եվրո (երեք հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.
- բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ

տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

4. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2020 թվականի մարտի 19-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Ռենատա Դեզեներ

Քրշիշթոֆ Վոյտիչեկ

Քարտուղարի տեղակալ

Նախագահ